

Աշոտ Սիմոնյանը Ապարանի համայնքապետերի հետ քննարկեց ընթացիկ խնդիրները

Օգոստոսի 3-ին Աշոտ Սիմոնյանը այցելեց Ապարանի տարածաշրջան եւ համայնքների ղեկավարների հետ խորհրդակցություն անցկացրեց Ապարանի քաղաքապետարանում:

Մարզպետը ողջունեց համայնքապետերին եւ ասաց, որ այցի նպատակը նրանց հետ ծանոթանալն է, նրանց խնդիրները լսելը եւ համատեղ դրանց լուծման հնարավորությունները քննարկելը:

-Այսօր կուտակված խնդիրները ավելին են, քան կառավարության՝ դրանց լուծման հնարավորությունները: Ուստի յուրաքանչյուր համայնք, յուրաքանչյուր բնակիչ պարտավոր է իր վրա որոշակի բեռ վերցնել,-ասաց մարզպետը: Նա օրինակելի եւ ողջունելի համարեց այն հանգամանքը, որ Ապարան քաղաքն ունի համայնքի զարգացման իր հիմնադրամը, որն իր շուրջն է հավաքում հայրենակիցներին, եւ ի նպաստ քաղաքի օգտագործում տեղի ու դրսի համերկրացիների ուժերը:

Այնուհետեւ համայնքների ղեկավարները մարզպետին ներկայացրին իրենց համայնքներում իրականացված ծրագրերը, ինչպես նաեւ առկա խնդիրները:

Ապարանի քաղաքապետ Գոռ Աբրահամյանը բոլոր համայնքների ղեկավարների անունից շնորհավորեց Աշոտ Սիմոնյանին՝ պաշտոնավարման կապակցությամբ եւ վստահեցրեց, որ համատեղ աշխատանքը արդյունավետ եւ շահեկան կլինի թե՛ համայնքների, և թե՛ մարզի համար: Քաղաքապետը ամենայն մանրամասնորեն ներկայացրեց ամենատարբեր ոլորտներում առ այսօր իրականացված ծրագրերը, որոնց արդյունքում լուծված են կարելուհավույն խնդիրներից շատերը:

Ելույթ ունեցող համայնքապետերը եւս ներկայացրին իրենց մոտ իրականացված բազմաթիվ աշխատանքները: Այդուհանդերձ, մեծ մասում առկա են միանման խնդիրներ: Դրանք հիմնականում վերաբերում են խմելու եւ ոռոգման ջրամատակարարմանը, ճանապարհների վերանորոգմանը, դպրոցների կամ մշակույթի տների վերանորոգմանը,

հանդիսությունների սրահների կառուցմանը, տարերային աղետների պատճառած վնասների փոխհատուցմանը, աղբահանության կազմակերպմանը եւ այլն:

Լսելով համայնքների ղեկավարների կողմից բարձրացված հարցադրումները, մարզպետը պարզաբանումներ տվեց դրանց կապակցությամբ: Նա կարեւորեց սեփական եկամուտների հավաքագրումը այն առումով, որ առաջիկայում դրանք առավելապես ուղղվելու են համայնքների ռազմավարական զարգացման ծրագրերի իրականացմանը:

-Մենք իրականությանը պետք է բաց աչքերով նայենք, -ասաց Աշոտ Սիմոնյանը:- Համայնքի հանդեպ մենք պետք է սեփականի, մերի հոգեբանություն ունենանք եւ անմիջական մասնակիցը լինենք համայնքի զարգացմանը: